CONCOURS D'ENTREE 2026-2027/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ 2026-2027

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

18/06/2026

9:00-11:30

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Առաջադրանք 1. (22 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 18 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:
Առաջադրանք 2. (14 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 6 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 3. (16 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 6-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
Առաջադրանք 4. (16 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 5. (12 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 4-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,5 միավոր:

Առաջադրանք 1 (22 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում գրել տառերը և կետադրել բնագիրը (18 միավոր):

Ամբողջ երկու շաբաթ էր՝ չէր գործում տպարանը. անսպասելի հարվածից ջարդուփշուր էր եղել Ոսկանի հոգին: Երբեմն Ոսկանին թվում էր՝ սիրելի աշակերտը գնացել է շուկա և ուր որ է ներս կգա՝ թղթի ծանր բեռան տակ շառագունած: Նրա սիրտը մղկտում էր անսփոփ ցավից: Կավե ափսեի մեջ դրված(՝) մոմի կտորը հետզհետե սպառվում էր՝ ծածկվելով մարգարտանման արցունքներով: Նայում էր Ոսկանը ասես հոգեվարք ապրող(,) թրթռացող այդ բոցին և զգում՝ ինչպես է իր սիրտը արտասվում ու հալվում այդ միայնակ մոմի պես, որից նա լույս էր աղերսում հայրենի բնօրրանի՝ Հայաստան աշխարհի համար:

Հանկարծ նա վեր կացավ տեղից և(,) զգուշորեն վերցնելով լուսաշող ափսեն(,)՝ հուշիկ քայլերով գնաց դեպի հանդիպակաց պատը: Ասես կիսախավարը ցրելով՝ տեսիլքի պես հայտնվեց իր սանի կերպարանքը՝ թախծալի ժպիտը դեմքին: Ոսկանի մարմնով սարսուռ անցավ, և նա փղձկալով հեռացավ պատից ու նստեց իր տեղը՝ կաղնեփայտե թախտին:

Արդեն մթնշաղին, արմունկները հենած թղթերի դեզին,(՝) Ոսկանը հանեց Ստեփանոսի՝ տարիներից խունացած նամակը և քանիերորդ անգամ կարդաց սիրելի մարդու տագնապալի նախազգուշացումները: «Սիրելի՛ ուսուցիչ, պիտի հիշես Նոր Ջուղայի տխուր վախճանը և չհավատաս ստահոդ լուրերին»,- սրդոդած կարդում էր նամակի վերջին տողերը:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով (2 միավոր):

1) ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ

2) ԲԱԶՈՒՄԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ, ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻ, ԴԱՇՏԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ

3) ՓՈՔՐ ՀԱՅՔ, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ

4) ՆՈՐ ՆՈՐՔ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՎԱՆ ԳՈԳ, ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են գծիկով (2 միավոր):

1) բառ (մասնիկ), հյուսիս (արևմուտք), ճեփ (ճերմակ) , ժուկով (ժամանակով), դեմ(դիմաց)

2) տնով (տեղով), հարավ (արևելք), ֆրանս (գերմանական), ձյուն (ձմեռ), թև (թիկունք)

3) տուն (թանգարան), ավել (պակաս), մաս (մաքուր), գյուղե (գյուղ), ինժեներ (մեխանիկ)

4) ասման (չասման), հասարակական (քաղաքական), գիշեր (ցերեկ), ընկեր (բարեկամ), քիթ(քթի)

2 . Առաջադրանք 2 (14 միավոր)

2.1. Տրված բառաշարքերից մեկական արմատ ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ կազմել վեց բարդ բառ (6միավոր):

Խլահավ	բառազույգ	**խլափեղկ**
կատվաձագ	կարմրադեղին	**կատվախոտ**
լրջադեմ	կծվահամ	**լրջ(ա)միտ**
գարշահոտ	երկփեղկ	**համուհոտ, գարշահամ**
խաղասենյակ	խոտաճարակ	**բառախաղ**
կտցահարել	մտածկոտ	**կարմրակտուց, դեղնակտուց**

2.2. Ընդգծել կազմությամբ բարդաձանցավոր բառերը (8 միավոր):[1]

Խելագարություն, ***քառակուսի,*** հողմահալած, ***միջնադար, հետնադուռ,*** տրամադրություն, ***քարաբեկոր, խցանահան,*** անկարգել, ***դուրեկան,*** գարնանացան, ***ծլունակ,*** հարթաքանդակ, ***բաղադրատոմս, վայնասուն***, պարահրապարակ, դասալիք, զվարճալի:

Առաջադրանք 3 (16 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (6 միավոր):

Հակիրճ, անագորույն, շոշափելի, սեղմ, բնավ, դեռափթիթ, տարակուսանք, նկատելի, վարանում, երբեք, դաժան, ծաղկահասակ:

հակիրճ-սեղմ
անագորույն-դաժան
շոշափելի-նկատելի
դեռափթիթ-ծաղկահասակ
տարակուսանք-վարանում
բնավ-երբեք

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (6 միավոր):

Նշանակալից, պարարտ, հավասարակշիռ, ամբարտավան, հարձակում, չնչին, համեստ, վտիտ, նահանջ, դյուրակեզ, անկայուն, հրակայուն:

նշանակալից- չնչին
պարարտ-վտիտ
հավասարակշիռ-անկայուն
ամբարտավան-համեստ
հարձակում-նահանջ
հրակայուն-դյուրակեզ

[1] 2.2 առաջադրանքում ցանկացած ութ ճիշտ պատասխանի դեպքում տրվում է առավելագույն միավորը:

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (4 միավոր):

ա) դուդուկի տակ պարել – ընկերանալ, երկու աչքով նայել – հետևել, խոսքի թելը կտրել – ընդմիջել

բ) թրի տակով անցնել – հնազանդվել, աչքի լույս – սիրելի, ինքն իրեն գտնել – սթափվել

գ) երեսը դեմ անել - կռվել, երակներում արյունը սառչել – սարսափել, քար քաշել – տանջվել

դ) գլխին բերել – վնասել, հացի տեր դառնալ – հարստանալ, ինքն իրեն ուտել – զայրանալ

ե) ի հեճուկս – հակառակ, երկինք գնալ – մեռնել, երես դարձնել – խռովել

զ) քարը քարին դնել – կառուցել, ծուռ հայելու մեջ – կեղծված, կամուրջ գցել – կապ հաստատել

Առաջադրանք 4 (16 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (4 միավոր):

ա) Կտրված հինավուրց կաղնին (շառաչյունով, շառաչունով) տապալվեց գետնին:

բ) Բժիշկը (պատրաստակամություն, պատրաստականություն) հայտնեց անվճար վիրահատելու հիվանդին:

գ) Գիտնականները որոշ վերապահությամբ են (վերաբերում, վերաբերվում) արտասահմանում տպագրված գրականությանը:

դ) Բանախոսի ներկայացրած փաստարկները տարակուսանքի (տեղի տվեցին, տեղիք տվեցին):

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):

Երկարատև սպասումից հետո, կորցրած/կորցնելով փրկվելու վերջին հույսը, մարդիկ, այլ ելք չունենալով, հարկադրված եղան դիմելու ծայրահեղ միջոցի:

(հարկադրել, կորչել, ունենալ, սպասում)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (8 միավոր):

Ի շնորհիվ, մեր մոտ, *նստեցրի*, սառչած, *լանջափոկեր*, *տասը տղա*, վերադարձրեցի, *քեզ համար*, ներառյալ այդ հարցին, *խաչքարեր*, մի՛ խոսի, *կպչող*, արքայադստրեր, յոթը հատ, *կդիպչի*, *առանց այդ*, ուխտատեղներ, ինձ վրայով:

Առաջադրանք 5 (12 միավոր)

5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա և ուղղել սխալները (4 միավոր):

ա) Ես շնորհակալ եմ Ձեզ, որ հայրենիքից հեռու այս օտար ափերում պահում-պահպանում եք հայի օջախը:

բ) Արևմտյան Հայաստանում շատերը հարկադրված էին կաթոլիկություն դավանել*ու*՝ թուրքերի վայրագություններից պաշտպանվելու համար:

գ) Նրա տարակուսանքն ու պոռթկումն այնքան բնական էին, որ դռան շեմին կանգնած՝ անշարժացել էր:
դ) Ոչ ոք այդպես էլ չհասկացավ, թե ինչու նա այդ քայլն արեց. չէ՞ որ ինձ ~~վրա~~ չէր կարող իշխել:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա և ուղղել սխալները (4 միավոր):

ա) Երգ ու երաժշտություն, խաղ ու պար լցվել էին փողոց:
բ) Այդ անկրկնելի կոթողների մեծ մասը մնաց~~ին~~ իր պապերի կորսված հայրենիքում:
գ) Ամեն ինչ՝ միջօրեի շոգը, տոթն ու գաղջ օդը, անտանելի ~~էին~~ էր դարձել:
դ) Սիրո և ատելության զգացմունքը փոխնիփոխ պարուրում էր նրան, և նա տարուբերվում էր այդ երկուսի միջև:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Այս լուռ հայացքը մեկն է այն բանալիներից, որոնք բացում են Համլետի խորախորհուրդ հոգին:

ա) Այս լուռ հայացքը մեկն է Համլետի խորախորհուրդ հոգին բացող բանալիներից:
բ) Համլետի խորախորհուրդ հոգին բացող բանալիներից մեկն է լուռ հայացքը:
գ) Այս լուռ հայացքը Համլետի հոգին բացող խորախորհուրդ բանալիներից մեկն է:
դ) Այդ լուռ հայացքը Համլետի խորախորհուրդ հոգին բացող բանալիներից մեկն է:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):[2]

«Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, սակայն,- գրել է Վիլյամ Սարոյանը,- ինքս ինձ համարում եմ հայ գրող. ոգին, որ ինձ մղում է գրելու, հայկական է»:

ա) Վիլյամ Սարոյանը գրել է, որ չնայած անգլերեն գրելուն և ծնունդով ամերիկացի լինելուն՝ ինքն իրեն համարում է հայ գրող. ոգին, որ իրեն մղում է գրելու, հայկական է:
բ) Վիլյամ Սարոյանը գրել է, որ թեև ինքը գրում է անգլերեն և ծնունդով ամերիկացի է, սակայն իրեն համարում են հայ գրող. ոգին, որ իրեն մղում է գրելու, հայկական է:
գ) Վիլյամ Սարոյանը գրել է, որ ծնունդով ամերիկացի լինելով՝ ինքը գրում է անգլերեն, սակայն ինքն իրեն համարում է հայ գրող. ոգին, որ իրեն մղում է գրելու, հայկական է:
դ) Վիլյամ Սարոյանը գրել է, որ թեև գրում է անգլերեն և ծնունդով ամերիկացի է, սակայն ինքն իրեն համարվում է հայ գրող. ոգին, որ իրեն մղվում է գրելու, հայկական է:

[2] 5.4 առաջադրանքի ճիշտ պատասխանում (դ) կա վրիպակ, ուստի տվյալ առաջադրանքի համար դիմորդներին տրվում է երկու միավոր: